

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ԼՐԱԳԻՐ

Գրական եւ Գիտական

Encyclopédie مجموعة علوم

ԽՄԲԱԳՐԱՊԵՏ - ՏՆՕՐԷՆ

Ղ. ԲՈՒԱՏ

Գ. ՇՐՁԱՆ

ԹԻԻ 58

1899 ՄԱՅԻՍ 15

Ամեն Տեղի համար Տարեկան կանխիկ 50 դանեկան, վեցամսեայ 26, իսկ եռամսեայ 13 դանեկան: Օտար երկրաց համար տարեկան կանխիկ 15 ֆրանկ: Թղթատարի ծախքը համապատասխան կը վերաբերի: Հասը 40 փարայ: Դաւառներէ բօսքի բուլ ալ կ'ընդունուի 100 դրուցի Տեղ 105 դրուց:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Գրութիւն Արտ. — Կենաց Գիրքը:

Ա. Բ. Եւ. — Խորհրդակցութեան արտեր:

Ս. Թ. Եւ. — Լեզուաբանական:

Ղ. Բ. Եւ. — Երկրագործական. Բերիւնի մշակութիւնը:

Մ. Կ. Մ. Եւ. — Տարեբեր եւ չորագործութեան:

Բեղնաւորիչ Նիւթեր:

Ղ. Բ. Եւ. — Ճարտարարուեստական, Ներկարարութիւն:

Թերթի Նախագիտակի. — Ուղեւորութիւն երկրիս:

Կեդրոնը (Ժիւլ վէրն)

Թղթականութիւն, Ազգ. եւայլն:



Հատը 40 փարայ

Տպագր. Գ. ԳԱՅՍԵՐԵԱՆ

Կ. Պոլիս, Պապ-Ալի ճատտէսի, Թիւ 44

„ՀԱՆՐԱԳԻՏԱԿ, Ի Բ. ՇՐՋԱՆԸ

Ամբողջ հաւաքածոն՝ թիւ 1էն թիւ 52, կը ծախուի մէկ օտմ. ոսկի. իսկ իւրաքանչիւր անշատ թերթ 5 դահեկան:

Հանրագիտակի Բ. Տարեշրջանի մէջ կարգ մը անձնաւորութեանց թերթ զըրկած ենք, իրենց բաժնեգինը վճարած չըլլալուն համար, ժամանակ մը վերջը դադարեցուցած ենք թերթերու առաքումը: Արդ՝ կը խնդրուի մեր Պատ. Գործակալներէն, որ բարեհաճին իրենց շրջանակին մէջ գտնուած այդպիսի անձնաւորութիւններէ ետ պահանջել թերթերը, և մեզ վերադարձնել:

Անոնք որ՝ հակառակ մեր ազդարարութեան, կամ թերթերը ետ տալ չուզեն և կամ փոխարժէքը չի վճարեն, հետզհետէ իրենց անունը պիտի հրատարակենք հոս:

ՇԵՐԱՄԻ ՀՈՒՆՏԻ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

ՄԱՆՐԱԳԻՏԱԿ (MICROSCOPE)

ՄԻԼԱՆՈՅԻ ՀՌԶԱԿԱՒՈՐ ԲՈՐԻՉԲԱ ՏԱՆ

Կեդրոնատեղի

Յ. և Ա. ՊՈՒԼՈՒՏԵԱՆ Եղբայր Դեղարանը

Ի Ջ Մ Ի Տ,

ուր կը գտնուի նաեւ շերամի հունտի պատրաստութեան համար ամէն տեսակի պիտոյք, գիւրամատչելի գներով:

Ծանօթ. — Մանրագիտականութեան տեսակներուն և գիւններուն վրայ, փափաքողներու մանրամասն տեղեկութիւն կը տրուի թղթակցութեամբ:

Վ Ե Ր Զ Ա Պ Է Ս

Լոյս տեսաւ ՄԱՅՍԹԵՐՍԶԱՅԹ ՍԻՍԹԷՄԸ որ տասը չափաթէն կուտուցանէ Ֆրանսերէն կարգաւ ու սահուն կերպով խօսիլ:

Ամբողջ գործը կը բաղկանայ 15 տետրերէ, գին 30 դր:

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ պատկերազարդ, որ կը բաղկանայ 3 հատորէ, այս անգամ վերստին տպագրուեցաւ Ամստը ընտիր թղթի վրայ: Գին 50 փր:

Այս քերականութիւնը որ պատկերներու վրայ նոր բնական մեթոտով կ'աւտոգրանէ հայ լեզուն, գնահատուած է բոլոր մանկավարժներէ: Դիմել Մարգարեան գրատունը:

Ս Ի Մ Ո Ն Յ. Ն Ա Շ Ա Պ Ե Տ Ե Ա Ն

ճարտարագէտ ազգայինը, հնարած և մեղանշնորհը առած է

Հ Ր Ա. Լ. Ո Յ Յ Ի Ա Ի Ա. Բ Ա Ր Տ Ի

(allume—feu)

որ առանց դժուարութեան, վառարաններու կամ կրակարաններու փնջն ու ԱՄՈՒԽԸ կը վառէ՝ նոյն իսկ եթէ թաց ալ ըլլան, առանց ու եւ անախորժ հոտի կամ անպատեհութեան:

Իւրաքանչիւր ծրար կը բաղկանայ 6 հրալոյց խաւարարտէ, և կ'արժէ 30 տանթիմ:

Կը պատրաստուէ՝ նորաձեւ այցեատմեր, փորձարար ԵՒ ԳՈՒՆԱՒՈՐ ԼՈՒՍԱՆԿԱՐՈՎ, որ յոյժ ճաշակաւոր նորութիւն մ'ըլլալով, գիմողները շատ գոհ պիտի մնան:

Կը պատրաստուէ նաեւ, և ան պարզ և լուսանկարչական փորագրութիւններ:

Կ'առանձնէ գրքերու, տետրակներու և ըն. սովորական կամ ճոխ կաղմ:

ՅԱՆՁՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ կ'ընէ, Արեւելի համար, մեքենաներու, վեներտիկեան հնութեանց լուսանկարներու և:

Մանրամասնութեանց համար գիմել հետեւեալ հասցէին.

Simon Nahabed
St. Lazare

Italie

Venise

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ԼՐԱԳԻՐ

Գրական եւ Գիտական

Encyclopédie معجم علوم

ԽՄԲԱԳՐԱԳԵՏ - ՏԵՕՐԷՆ


Գ. Ր Ո Ւ Ա Ց

Գ. ՇՐՋԱՆ

ԹԻԻ 58

1899 ՄԱՅԻՍ 15

ԿԵՆԱՑ ԳԻՐՔԸ



Աստուած թուղթը մարդուն տուաւ որ սեւցընէ զայն, ու մօրուքը մարդուն տուաւ որ ձերմկցընէ զայն:

Այլ թուղթը սեւցընէ՝ հանրագում ճշմարիտ գաղափարաց ու փափուկ ազնիւ մարդասիրական զգացմանց թուի ու սրտաբուխ արտայայտութեամբ: Ու մօրուքը ձերմկցընէ՝ բարի բարի գործերու ու մեծագործութիւններու հոծութեան մէջ, մեծարդիւն նախազարց հետեւողութեամբ:

Աստուած թուղթը մարդուն տուաւ որ մագաղաթ ընէ զայն, մագաղաթ արժանեաց ազնուականութեան: Աստուած մօրուքը մարդուն տուաւ, որ մասունք ընելու արժանի կացուցանէ զայն:

Անհուն տարածութեան մէջ չողացող տիեզերական աչքը, որ Ամենակարողին կողմանէ կը դիտէ բոլոր երկրագունքերու մարդկութիւնն, ամէն անհատի ամէն օր, ամէն իրիկուն կը հարցընէ. «Ի՞նչ ըրիր այսօր. կեանքիդ գիրքը կը լեցընե՞ս կոր. մագերուղ թելերու թուոյն՝ բարեգործութեանցդ թիւը հաւասարելու ջանք կ'ընե՞ս կոր»:

Արեւն, այո՛, աչք մըն է. արեւն, այո՛, հարցում մըն է: Լուսոյն ու տաքութեան փոխարէն, զոր մեր Արարչին կողմանէ մեզի կը պարգեւէ, մենէ գիր, մենէ գործ, մենէ կոթող, մենէ կեանք կ'ուզէ կը պահանջէ: Իր ճառագայթն ոսկի է, և ամօթ է որ մենք աղքատ ապրինք արեգական ճառագայթներուն տակ. իր տաքութիւնը կեանք է, և մարդ անուէրն անարժան ենք՝ եթէ զուրկ մնանք արեգական տակ կեանքի արտայայտութիւններէն, աշխատասիրութենէ, մարդասիրութենէ և նոյն իսկ (սահմանադուր ողջաւէտ) զուարճասիրութենէ:

Երանի՛ ա՛յն սոսկական մարդուն, որ արեւին դասը կը հասկնայ և Աստուծոյ պատուէրը կը կատարէ: Մանաւանդ երանի՛ ա՛յն հանրային մարդուն, որ տուտուն արեւուն հետ կ'ընէ սոսկական մարդուն, հասարակ աշխատաւորին նման, և Աստուծոյ Ամենակալին իրեն յանձնած գործն ու պաշտօնը կը կատարէ եռանդեամբ ու խղճմտութեամբ:

Կեանքին Սալմոն ամէնքս ալ պէտք է երգենք մեր շունչին երկայնութեան համեմատ, ու կեանքին գիրքը պէտք է կարգաւք ու մեր կեանքին գիրքը լեցընենք ամէնքս ալ, ու մենք մեր ձեռքով ամէնքս

ալ պէտք է ջանանք ստանալ մեր անուանականութեան մագաղաթն, յարգելով անտարակոյս ու համբուրելով մագաղաթը զոր մեր հայրը կամ նախահայրը մեզի կը թողու:

* * *

Թո՛ղ չըսէ մարդ թէ գործելու գործ չը կայ, թո՛ղ չըսէ մարդ թէ խորհելու խափան ու գործելու արգելք կայ, թո՛ղ չըսէ մարդ թէ գրողին ու գործողին այս աշխարհիս վրայ միշտ վարձք չը կայ: Մեր մէջ այսօր անհատութիւն մը կայ մասնաւորապէս, որուն գործունէութիւնն հերքեց գործելէ առաջ գործունէութեան փիլիսոփայութիւնն ընելու գտնադաշտէ գաղափարաւորելի գրութիւնն, որ շատ անգամ՝ այդ փիլիսոփայելի՞ վախճան չը գտած, մեր վախճանին մօտ գնել կը դնէ:

Որին միաքն՝ այս խօսքերուս՝ Օրմանեան Պատրիարքին վրայ չը դարձաւ: Մենք չենք գիտեր ինչպէս ու ե՞րբ վարդապետ եղաւ Օրմանեան: Բայց Օրմանեան վարդապետը ճանչցած օրերէն ի վեր բան մը ևս քան զիս աղէկ գիտենք. այն թէ չը կրնար անգործ կենալ Օրմանեան: Եթէ չը խօսի, պիտի գրէ, եթէ չը գրէ, պիտի գործէ, եթէ չը գործէ, պիտի խորհի, եթէ չը խորհի, պիտի աղօթէ:

Եղան եկեղեցականներ որոնք կեանքերնին աղօթելով անցուցին, և Աստուծոյ ու մարդոց հաւատարմութիւն հաճոյ հանդիսացան: — մարդոց ալ, այո՛, աշխարհականաց ալ որովհետեւ իրենց աղօթքն ամբողջ գրականութիւն մ'եղաւ: Երկնային ու երկրային որքան մեծ վարձուց պիտի արժանանայ մեր Պատրիարքն, որ եկեղեցականի մը բոլոր պարտաւորութիւնները կը կատարէ, աչքերն ո՛րքան երկինք նոյնքան իր հօտին իր ժողովուրդին վրայ սեւեռելով:

Իր աղօթքներն արդարեւ չը գտնեցան, գրականութիւն չեղան. այլ գրածն՝ չըսմ գրականութենէ՝ աւելի եղան, գործեր եղան: Լամբէն չը կարգացիք. Հոսոսէն Ե Իսահակէն աւելի աղէկ բացատրող չը գտնուեցաւ թէ ի՞նչ ոյժ, ազդեցութիւն ունի աղօթքը: Բայց աղօթքն անիկայ աւելի ոյժ չառնէր միթէ, որ ու է գործի, ու է ձեռնարկի համար իր ոյժերն ամփոփելու տրամադիր է: զերբնական ոյժն անոր կու դայ,

որ բնական ոյժն ալ չարհամարհեր: Երբ մարդս աչքերն երկինք վերցընէ, պէտք չէ մտնայ որ այս երկիրս ալ միեւնոյն Երարչին արարչագործութեան մասն է: Արդ, Օրմանեան աղօթելէ առաջ աղօթիցն արդիւնագործման պատրաստուեցաւ. զի աղօթքը միշտ գնալէս հոգւոյն միմեծը կամ յուսահատութեան ճիչը չէ, զի գործելէ առաջ ալ, այո՛, պէտք է աղօթել:

Օրմանեան աշխատող մ'եղաւ: Յաւիտենական Հոռմին բուրներէն մինչեւ բարձր Հայոց լեռներն ու մինչեւ լեռանց լեռին ոտքն, աշխարհ նորին Բարձրութեան համար ուսումնարան մ'եղաւ: Ոչ միայն դպրոցի մէջ ուսաւ — ամենէն բարձր ուսումներն, այլ աշխարհի մէջ սորվեցաւ ամենէն հասարակ արհամարհ ուսումներն ալ: Ո՛ր ժողովուրդեան խոնարհ դասերը խոնարհագոյն վիճակին մէջ կ'ապրին, գաւառները, հոն անտարակոյս կարեւորագոյն և արդիւնաւորագոյն դասերն առաւ խոնարհութեամբ ատուածային քուրդչէն, խոնարհ դասերու բարձրացման համար աշխարհ եկող Աստուած որդւոյն ճշմարիտ աշակերտը: Որովհետեւ Հոռմը տեսած էր, չը մերժեց երթալ Անատոլու, երբ Պատրիարքարանի կողմանէ գաւառական առաջնորդութեան կոչուեցաւ:

Եւ այս համակերպութեամբ, Օրմանեան երեք յատկութիւններ միանգամայն յայտնեց. Դիտակցութիւն՝ նախ՝ նախաքրիստոնէական ու քրիստոնէական կրկին անդրանիկ քաղաքակրթութեան, որ այսօր նոստացած շինականացած այդ վայրերը ծաղկեցուցած լուսաւորած էր Հռոմէական հին ու նոր քաղաքակրթութենէ առաջ. երկրորդ՝ ճանաչումը տարրական ու թէ բարձրագոյն սարստաւորութեան, զոր ունի հովիւն իր հօտին ամենայեալին դասերուն նիւթապէս ու բաւարյապէս ամենէն աւելի մօտենալու. երրորդ, յարգանքը կարգապահութեան օրինաւորութեան, զոր, ստակականներէն աւելի սլարտին հանրային անձինք տածել:

Հին ու նոր աշխարհին բոլոր համալսարաններուն ալ վիպականներն ի ձեռին ունենար, անհնար էր որ Հայոց Պատրիարք ըլլար Օրմանեան, եթէ չը խոնարհէր, այո՛ւնքն եթէ չը բարձրանար գաւառական առաջնորդութեան: Գրուող քուէէն առաջ է

այրող իղձը . արդ, անձկայրեաց, Օրմանեան վարդապետին Պատրիարքութեան փափաքեցաւ գաւառացի՛ն, որ անոր ազաջնորդութեան ներքեւ ասրեցաւ, որ անոր խօսքէն ազդուեցաւ, որ անոր գործունէութենէն օգտուեցաւ: Աթոռն անո՛ր պէտք է ըլլայ որ արտը տեսաւ, մահանն անո՛ր որ մածը ձեռքը առաւ, բարձր տիտղոսն անո՛ր որ արօրին բացած ախօսին մէջ խոնարհ հոլագործ մշակին ճակտէն աշխատութեան սուրբ քրտինքի հոսումը տեսաւ: Այս է Բրիտտոսի ճշմարիտ աշակերտութիւնը. ժառանգազուրկ դասերուն ժպիտին ու արտասուքին, սրտին ալեւէն շողացող պայծառագոյն այն ժպիտին և անժառանգութեան աչքերը թրջող արգասաւետ այն արտասուքին տիպապատեալ ու հաղորդ բաժանորդ ըլլալ, ու լա՛ւ: Չլացող մարդը չը կրնար մեծնալ. իսկ եթէ մեծնայ, չը՛ կրնար ժողովուրդին սրտին տիրանալ:

Ու Բրիտտոսի ճշմարիտ աշակերտը, ա՛յն որ վարդապետ, ա՛յն որ ճշմարիտ վարդապետ, մեծ վարդապետ պիտի կոչուի, պէտք է իր կարգին, հետեւելով Տէրոջը մեծ օրինակին, ինքն ալ աշակերտներ հասցընէ: Ինչ որ ըրաւ մեծ աշխատողը, Օրմանեան վարդապետը: Թողունք իր մատենախօսութիւններն, և իր Հայ վանքերու ու Հայ աշխարհի (Ան+ և ալ+բն) նկարագրութիւններն, իր բանախօսութիւններն ու քարոզութիւններն, սրնցմով ամբողջ ժողովրդեան միտքն ու հոգին յօրինելու նպատեց, Աւետարանին սիրոյ ու կատարելութեան վսեմ պատուէրներն ընդլայնելով լայնարարաւ իր լեզուով: Օրմանեան՝ երիտասարդութեան հոգեւոր ու մտաւոր զարգացման գործին մէջ ալ յոյժ ընդարձակ բաժին մ'ունեցաւ, դասախօսելու յաջորդաբար Էջմիածնայ շեմարանին, Կարնոյ Սանատարեան վարժարանին, Կալաթայի կեդրոնական վարժարանին ու հոսկ ապա Արմաշու վանքին ժառանգաւորաց արդիւնաշատ վարժարանին մէջ, — որոց հաստատութեան առաջին ստատարը՝ պէտք չէ մոռնալ երբեք՝ մեծանուն բարերար Վսեմաշուք Ունձեան Աբիլ էֆէնտին եղաւ, որպէս վանահայր-վերացեալին առաջին օժանդակին՝ ամենարժան Եղիշէ Դուրեան վարժապետը:

Տեսէ՛ք հիմայ, ա՛յն գրեալ քուէներէն դատ, գորս Ընդհանուր ժողովոյ մէջ ստացաւ

Օրմանեան Արքեպիսկոպոս, որքա՞ն իղձեր, անգիր քուէներ՝ ու է ազդեցութենէ գերծ, այդ եկեղեցականն Հայոց Պատրիարքութեան կը կոչէին: Կրնար ըլլալ որ ուրիշ եկեղեցական մը, քանի որ քանի մ'ուրիշ արժանաւորներ ալ ունինք, Պատրիարք ընտրուէր, և Օրմանեան խոր ծերութեան հասնելով վախճանէր իբրեւ պարզ արքեպիսկոպոս կամ նոյն իսկ վարդապետ: Շահնազարեան կալուած վարդապետին համար ի՛նչ եղաւ, նոյնը պիտի ըլլար իրեն համար ալ. պարզապէս պիտի անմահանար: Եւ մարդ, աշխարհական կա՛մ եկեղեցական, աւելի ի՞նչ կը փափագի աշխարհի վրայ:

Բայց Օրմանեան Պատրիարք ընտրուեցաւ, Վեհապետէն ու ժողովուրդէն հաւատարմապէս գնահատուելով: Եւ մեր վեհապետին բարեացակամութեամբ, Օրմանեան Պատրիարքին գործակից ունենալ տրուեցաւ ամենէն փառաւոր Վարչութիւնն որ Պատրիարքի մը տրուած ըլլար ունենալ:

* * *

Ո՛չ Օրմանեան Պատրիարքին ո՛չ իր վարչութեան վրայ դատաւորան ընել կ'ուզենք: Այդ գործը պատմութեան կը պատկանի. և մենք գրականութիւնն ենք, մենք առօրեայ լրագրութիւնն ենք: Մենք՝ բանաստեղծ, խո՛ւնկն ենք անո՛ր, խու՛նկն ենք անո՛նց, խու՛նկն ենք ա՛յն ամէն հանրային անձանց որոնք խնկելի եղան՝ իրենց կեանքը լեցնելով բարի բարի յիշատակելի գործերով, Աստուծոյ ձայնին ու ժողովրդեան քուէին անսալով, հանրային կամաց արտայայտութիւնն եղող ու փորձառութեան նուիրագործումն ունեցող օրէնքին հպատակելով, երթալով տուն օրը պայծառ ճամբան՝ լայն պողոտան արեգական ուր ժողովուրդը կը քալէ, և՛ երթալով այցելելով լուր օրերը մռայլ ուղիներն ու խաւարչտին անկիւններն ուր ժողովուրդը կը վարէ երկու խաչակնքումի մէջ՝ խաչի կեանքը, կեանքի դառն պայքարն: Ու մենք իղձն ենք անհուն, որ արժանիքներն ու անձնութիւններն մեր վերացեալ այլ կոչեցեալ տոհմին ծոցը կը կոչէ բոլոր եւանդներու բորբոքեալ սոստիւթեամբ:

Թուղթը պարզեց Աստուած մեր առջեւ, այսինքն կեանքը, որ զայն լեցնենք գովելի գործերով և անձնութիւնով: Ու մազելը

բուսացուց Աստուած մեր ծնօտին վրայ, որ-
պէս զի ճերմկեցնենք զանոնք առաքելու-
թեանց ու սիրագործութեանց լոյս աղբիւ-
րին մէջ: Այսպէս ընելու հետամուտ է Օր-
մանեան Սրբազան: Եթէ արձանագործ ըլ-
լայինք, նորին Բարձր Սրբազնութեան ար-
ձանը կը շինէինք, ստուար հոծատառ գիրք
մը ձեռքը, կանխաւ համակ սպիտակ պատ-
կերացնելով իր մօրուքն, որովհետեւ կը
բաղձանք, որովհետեւ կը մաղթենք որ խոր
ծերութեան հասնի, և որովհետեւ վստահ
ենք որ իր մօրուքը պիտի ճերմկեցնէ լսանից
ու գործոց հոծութեան ու մեծութեան մէջ
մարգարէներուն նման, որոնց ամենամեծնե-
րէն միայն անունը կը կրէ: Քարակերտ մե-
ծարանքին անկարող, թուղթի վրայ հրապա-
րակաւ այս մեծարանքը կը մատուցանենք
Աշխատողին, նուազ իբրեւ գնահատումն ի-
րեն քան իբրեւ գրգիւ աշխատութեան ու
գործունէութեան ամէնուն, եկեղեցական ե-
ղեր են կա՛մ աշխարհական, ինչպէս որ յօդ-
ուածիս սկիզբէն սկիզբէն ու վերնագրէն ե-
րեւցաւ:

Ձը գիտեմ գնահատողին ու քաջաբերողին
վարձքն ի՛նչ պիտի ըլլայ արքայութեան մէջ,
այլ վճատեցնողին պատիժն անտարակոյս սու-
կալը. իտի ըլլայ:

ԳՐԱՍԷՐ ԱՏՈՄ

ԽՈՐՏԱԿՈՒԱԾ ՍՐՏԵՐ

(ՄԵՐ ԲԱՐՔԵՐԷՆ ԻՐԱՎԷՊ)

Դէմն նստեր կը խօսէր, ընդհատ,
ցաւագին ձայնով մը, երկու բառի մէջ-
տեղ միասի մ'առնելով ու ձեռքերուն
մէջ ձիւնաթոյր գլուխ մ'երերցնելով
վշտակոծ: Վառարանին ճարճատիւնին
հետ՝ իր սրտին մէջէն ժայթքող բառե-
րուն ճարճատիւնը համանուագ մը կը
յօրինէին սենեկին լայն ամսյութեան

մէջ, երկուքնիս էինք, երկուքս ալ ծխա-
ցող ու մխայրող, ան՝ աւելի տարէց՝ շատ
ձմեռներ տեսած ըլլալուն, ես՝ աւելի
կրտսեր՝ դեռ պատրանքներու կեանքին
սովկէանին վրայէն նաւարկելու...

— Կը ներես, հծծեց յանկարծ իր
քնացող ձայնը՝ որ կարծես գանկէն դուրս
կ'երէնէր, այսօր, ա՛յլ չեմ դիմանար, ա՛յ
պիտի ըսեմ:» ու սկսաւ պատմել:

Ա.

« 189...ի տարւոյն առաջին ամիս-
ներուն էր որ աղջկանս՝ Զապէլին հետ
Բերա, պարահանդէս մը դացեր էինք:
Դուրսը ձիւնը ամէն կողմ պատած էր:
Անհամար լամպարներու և կանթեղներու
օգային լոյսին տակ վեհաշուք տեսիլ մը
կ'ընծայէր թատրոնը ուր հաւաքուած
անթիւ բազմութեան նմանը տարիներէ
ի վեր տեսնուած չէր: Օթեակ մը մտանք:
Առանձին էինք: Սկսելուն դեռ ժամա-
նակ կար: Երբ դիտակս դիմացի կողմս
ուղղած կեցած էի, թաշկինակ մ'երե-
րաց. հասկցայ. մեր պաշտօնակիցներէն
մին էր: Ու հինգ վայրկեան ետքը ներս
մտաւ Վահէ, ձեռքին մէջ փայլուն թղղ-
թով բան մը բռնած, անստգիւտ իր
վայելուչ արդուգարդին մէջ ու մեր քո-
վը նստելով սկսանք խօսակցել:

Որովհետեւ աշխարհիկ մը, զուար-
ճութեանց սիրահար մըն էր ան, մեր
խօսակցութիւնը չուշացաւ դառնալ պա-
րահանդէսին կազմակերպութեան, փայ-
լին, չքերդութեան ու կատարուելիք ա-
նակնկալներուն վրայ, որոց ամէնուն ալ
մասին այլ և այլ դիտողութիւններով
սկսաւ իր գաղափարը յայտնել: Ըսաւ
թէ նուագախումբը անմիջելի էր, թէ
պարերը շատ խելայեղ պիտի ըլլային,
թէ գլխաւոր դաղարներուն ժամանակ՝
ճարտար ձեռնածու մը անհաւատալի
խաղեր պիտի ներկայացնէր, թէ վեր-
ջապէս ամէն հաճոյասէր իր նրբաճաշա-
կի ձգտումներուն համեմատ՝ պէտք ե-

դածէն աւելին պիտի դանէր՝ նրբանցը-
ներու, պիւֆէին, օթեակներուն կամ
սալօններուն մէջ։

Արդէն կէս ժամ անցած էր, երբ Վա-
հէ օրօրուն վերջաբանով մը վերջակէտ
մը դրեր էր իր ներքողականին առջեւ։
Եւ ահա մեր քովէն, խորունկը թաղ-
ուող օթեակէ մը, նուագի հեղեղ մը
ժայթքեց։ Մտիկ ըրինք։ Ծանօթ Բայ-
լերզն էր։ Ու քառորդ ժամ դադարէ մը
վերջ՝ այս անգամ, ուրիշ, տարբեր, մո-
դական եղանակ մըն էր որ «վալս»ը
կ'աւետէր։ Վար իջան երկուքը, Վահէն
ու Զապէլը։ Օձապտոյտ շրջաններն ար-
դէն սկսեր էին գետնին վրայ դժուիլ։
Այդ յորձանքին խառնուեցան երկուքն
ալ, վարէն յարգանքի նշան մ'ուղղելէ
վերջ՝ ինծի։ Տեսարանը սխրալի էր։ Տօ-
մինօներու, դիմակաւորներու խումբեր
մէկ կողմ, անդիմակներու խիռս ու ան-
հրաժեշտ արդուզարդեր ասդին, հմա-
յիշ, զգլխով։ Եւ այս ամէնուն մէջ,
միօրինակ, համաչափ, աննկարագրելի
ներդաշնակութիւն մըն էր, տարօրինակ,
լարուած հսկայ զսպանակի բիւրաւոր
թելերու անհուն չարժուժ մը կարծես՝
որ անվերջ տողանցումներ կը զիկզակէր
անխուստիելի ճշգրտութեամբ։

Քսան վայրկեան տեւած էր այդ
յուսահատական ոգեւորութիւնը։ Եւ
ուրիշ քսան վայրկեան մըն ալ՝ աղջկանս
ու բարեկամիս «պիւֆէ»ն մնալը։ Վեր-
ջապէս եկան, զուարթ, այտերնին կար-
մըրած, Վահէն ափ մը շաքար երկնցնե-
լով ինծի զոր չկրցայ մերժել, ու, ոտքի
վրայ մէկ քանի բառեր փոխանակելէս
վերջ, երիտասարդ բարեկամս դարձեալ
իր օթեակը վերադարձաւ։»

Հոս կանգ առաւ կանխահաս ծերու-
նին, կարծես մտքին խորը, յիշատակ-
ներու այդ անտիպ դրքին խորունկը
փնտռելով էջերը յուզումնալից պատ-
կերներու... աչքերը գոցեց, գոցեց
մինչեւ սրտին մէջ ու ծանր վանկերով
չարունակեց։

Ք.

«Վեց ամիս վերջը ամուսնացած էին
աղջիկս ու Վահէն։ Պարահանդէսը չէին
մուցած, ու հիմայ ալ երջանիկ էին.
ե՛ս ալ երջանիկ էի։ Ամէն իրիկուն, երբ
վերջալոյսն իր արեւածաղկի անհատ-
նում արտամութիւնը կու գար փռել մեր
ժովեղերեայ բնակարանին առջեւ, ծո-
վուն երազող անհունին վրայ, իրենց
ստուերները կը դիտէի պատուհանէս,
որոնք պարտէզին անթիւ ծաղիկներուն
վրայէն կ'երկնային ու դէպի ծովը
կախուելով կը կորուէին։ Ո՛րչափ կը
սիրէի զիրենք. Վահէն՝ տղա աննման
տղան, հայրը, եղբայրն ու սմուսինն
էր միանգամայն միակ աղջկանս. երկու
զաւակ ունէի ալ, և ես անոնց երիտա-
սարդութիւնը դիտելով կը վերադառ-
նայի իմ նախկին օրերուս։ Կը յիշէի
անցեալիս առէնէն յուզեալ շրջանները,
ուր, միս մինակ, աշխարհիս անբաւ
փորձութեանց մէջէն պիտի քալէի, ճա-
կատագրին մտրակը ճակտիս... Ծնողքս
մեռած էին, ես որք մըն էի, լքուած
մը, դժբախտ մը, երբ օր մը դիպուա-
ծը, սխալմամբ թէ կամաւ, աչքերուս
ժպտեցաւ։ Չե՛մ ըսեր, չէ՛, չպիտի ը-
սեմ թէ ի՞նչ ըրի եռ այն ատեն։

... Զապէլին հետ մինակ մնացի օր
մըն ալ։ Իմ ամբողջ սէրս, ամբողջ կեանքս
անոր շուրջը պտտուցի տարիներ, դա-
րե՛ր։ Իմ վիշաբուս մէջ աղամանդ ե-
րազ մըն էր ան. անոր նայած ատենս
գուրգուրանքներս բազմապատկուած գը-
տայ. տառապիլ գիտցայ աղջկանս մէկ
արցունքը տեսած օրս, և արշալոյսը այն
ատեն ճանչցայ, երբ անոր աչքերուն խո-
րը մարդարտեայ ծիծաղ մը նշմարեցի...

Հոգւոյս մէջ, անոր ժպիտներն ու
արցունքներն իմի՞ններուս հետ խառնե-
լով՝ բիւրեղէ շիրիմ մը կանգնեցի անո՛ր
համար՝ որ իւր մայրը եղած էր, անո՛ր
համար՝ որ արցունքի գոյութիւնը մոռ-
ցուցած էր ինծի, բայց անո՛ր համար որ
Զուարթունի կեանքով մ'ապրեցաւ...։

Հիմայ, սէրս պղտիկ կը գտնէի երեք սիրելիներու մէջ բաժնելու համար, Զապէլին, Վահէին ու Յիշատակին. ամէն անգամ որ իմ լուին մենութիւնս կը պտտցնէի ծառերուն թաւ շուքին տակ, ուրկէջ երկու երիտասարդներուն ծիծաղկոտ բառերը կը լսէի, Յիշատակին համար ունեցած ցաւագին խռովքս կը հանդարտէր տակաւ, ինչպէս փոթորիկի յանկարծական անցը մը ծովուն մարթին վրայէն, և կ'զգայի թէ յայտի, երազանքի ծաղիկներ կը փթթէին հողուոյս բիւրեղ շիրմին շուրջ...

Պ.

«Քառասունեութ ժամէ ի վեր է որ աչքերս չեմ փակած, բարեկամ», հինգ վերջին անգամ արցունքներէ բղխող իր ձայնը, «կեանքիս բովանդակ տառապանքովը հսկեցի աղջկանս մտարին մեա, յիշեցի, աղօթեցի ու լացի՝ անոր ճգնաժամերուն առջեւ... Ես առանձին էի բայց ինծի այնպէս թուեցաւ թէ հոգիս մէջէն Յիշատակն ալ ինձ հետ կ'օրհնէր ու կու լար. վերջապէս աղջիկս փրկուեցաւ երբ երկինքը անձկութիւն մ'ալ պարզեւեց մեզի, նորեկ մը...

— Բայց Վահէն, ընդմիջեցի:

Հոս՝ նայուածքին ցաւը աննկարագրելի էր: Ստկումով լռեցի, այնչափ դէմքը գունատ էր և այնչափ չորթերը կը դողային: Բայց անհկայ ճիգ մը ըրաւ, հզօր, անլուր ճիգ մը, և աւելցուց.

— Վահէն, ո՞վ գիտէ... բայց ի՞նչ կրնար ընել ան, եթէ ես չըլլայի: Իմ վիշտերուն անչափելի խորութեան առջեւ՝ աղջիկս սրտապնդեցաւ ու միտթարուեցաւ. անոր՝ կեանքէն դէպի մահ տարուբերած ոտեն, իմ սրտիս մէջ արդէն քանի մը մահեր հնչեցին, բայց երկինք կեանք պարզեւեց մեզի որպէս զի տառապանք ու սիրենք...

Զահողութեան շրջանն էր որ կը սկըսէր, որ սկսած էր ամիսներէ ի վեր. ես զոհ մըն էի արդէն իմ Յիշատակիս սի-

րովը առչարուն. հիմայ Զապէլն էր, ինծի վիճակակից, ինծի հետ բախտակից, ինծի պէս դժբախտ... անհկայ շատո՞նց փակեր էր հրաշալի էջերը իր կեանքին սակեղօծ յառաջարանին՝ որ ալ հառաչարան մըն էր, անմեկնելի, անգութ, դառնակակի՞ծ:

Անխիղճ Վահէն, եթէ դիտնար թէ ո՞րչափ սիրած էի զինքը. ո՞րչափ՝ մեր բարեկամութեան շրջանին մէջ գուրգուրացած էի իր վրայ: Ես իմ կեանքէս շատ բան զոհեցի անոր երջանկութեանը համար և անհկայ իր անփոյթ օրերուն մէջէն իմ աւերակս կը դիտէ. ո՞վ գիտէր թէ այդ պարահանդէսը Զապէլին վտանգիկ երջանկութեան և իմ Յիշատակներուն մէկ ցայգանուազը պիտի ըլլար...

Այսօր, յիշատակներ կան միայն, երկու յիշատակներ, մին յաւերժական սրտազեղումներու մէջ փաթթուած, միւսը յոյսերով սկսած, լայնցած ու պատրանքով վերջ գտած. ու յետոյ, երկու զուարթուն հոգիներ՝ Զապէլն ու թուներկը՝ զոր Յիշատակիս ու աղջկանս սիրտին համար միայն պիտի սիրեմ:» Լռեց ու կարճ մրափ մ'առաւ:

Ձեռքերս իրեն երկնցուցի՝ տխրած ու տոգոյն: Ձէի հաւատար: Այդ արուեստագէտի հոգիին համար՝ տառապանքը գծուծ կը գտնէի, արցունքը ռամիկ կը թուէր ինծի՝ իր աչքերուն համար: Ձէ՛, սո՛ւտ էր, կամ հաղիւ ճըշմարտանման. բայց ինծի շատոնց մտերիմ էր եղած իր բարի, անկեղծ հոգին: Ուղեցի այդ հոգիին մէջէն բոլոր դառնութիւնը, բոլոր ժանգը դուրս թափել: Վարանեցայ, նախ մէկ վանկը զրուցեցի, ապա դարձեալ վարանեցայ. աչքերուն մէջ նայեցայ՝ հարցումս՝ աչքերուն մէջ: Ձեռքովը յուսահատ շարժում մը գծեց օդին մէջ ու հծծեց.

— Վահէն, հոմանունի մը առած նստած է:

ԼԵԶՈՒԱԲԱՆԱԿԱՆ

ԹԷ ԿԱՐԵԼԻՐ Է ԶՈՒՏ ԹՐԲԵՐԷՆ ԳՐԵԼ

ՔԱՆԻ ՄԸ ԽՕՍԲ «ԻՄԼԱՑ»-Ի ՎՐԱՑ

Լեզուական տոյն կարեւոր հարցը՝ կ'արժէ որ օսմանեան լեզուի ամէն ուսուցչի ուշադրութեան առարկայ ըլլայ: Պետքն է ք. Կարապետեանի «ոչ»էն յետոյ, խել մը կարծիքներ ալ հրատարակ նետուեցան հայաթերթի մը միջոցաւ՝ որոնք առաւել կամ նուազ յարմար էին իրենց նպատակին: Բայց թէ կարելիութիւն ունի՞ այդպիսի յեղափոխում մը, ահա՛ խնդիրը: Եթէ Նաճի՛ն միջբերուի, կրնանք յայտարարել որ՝ ողորացեալ թուրք Ալֆրէտ տը Վինելին՝ Օսմաներէնի պարզութեան ու բարեշրջման սիրահար ըլլալով հանգերձ, իր գրական արտադրութեանց մէջ՝ արդէն ընդունած էն աւելի զուտ թրքերէն բառ չէ գործածած, ու միշտ գեղեցկագիտական հայեցակէտով՝ լեզուին գորգաշմանը զխաւոր պաշտպաններէն եղած է: Իր կէտ նպատակին եղած է աւելի, նոյնիմաստ բառերու քով քովի կիրառութիւնը՝ ու վերջապէս անխառն ձեւերն միանգամ ընդ միշտ վերցնել: Պարսկ. լեզուի նշանակար ուսուցիչ «մուալլիմ Ֆէյզի» էֆէնտիի մէկ հեղինակութեանը առիթով՝ իր գրած ներդրական նամակէն ալ կը հասկցուի թէ՛ առանց պարսկերէնի (ու նաեւ արաբ. լեզու իրաւագիտութեան), լաւ թրքերէն սորվիլ անկարելի է: Այդ նամակին մէկ պատասխիլը՝ «Պիզէ լիտանը ֆարսի թահսիլինին տէրէճէյի էհէմ միյէթինի կէօթէրմէք իջուն»՝ «պու լիտանը լիզումը գատար» պիլմէյէնէրիմիպին «Օսմանլըճայա» լաւագլուս վազըֆ ա՛տա օլըն մատըգլարընը սէօյէմէք քեաֆի տիր»։ Ըսել է որ Օսմաներէնի ըստ «բառ»-ի հմուտ ըլլալու համար՝ պարսկերէնը պէտք եղածին չափ զիտնող անհրաժեշտ է եղեր, եթէ պատուարժան պարզասէրներն՝ Նաճի էֆ. ի տիւնածելի հեղինակութիւնը կը ճանչնան: «Պու նուլա պէրսպէր «ֆարսի գօլայ տըր, ալթը պտոտ էօյրէնիլը» գալիլ շայիլ տէ միւպա-

լազատան խալի տէյիլ տիր, չիւնքի գալալա տի ֆարսիյէնէի հալի օլմագ իւզրէ քիթապա լար թէ՛լիֆ իտէն գէվաթըն տախի՛ պու լիտանը հագգըլա պիլմէտիքլէրի եինէ քէնտի էսէրլէրինտէն անլաշըլուպ տուրուեօր: Պիր լիտան իջուն՝ գալալա քիթապը եազաճագ գալթըն օ լիտանտա միւթէպահէկր (խորահմուտ) օլմաղը լազըմ կէլիւր, էօյլէ օլմագ իտէ թահսիլ թապիպ խալիմիշ օլուր: Սիւխէն վէրը սիհր աֆէրլոյն մուալլիմ Ֆէյզի էֆ. հազրէթլէրինին լիտանը ֆարսիտէքի մէհարէթլէրի միւսէլլէմի ալէմ տիր. պիւնայն տէյէն պէօյլէ պիր քիթապ թէ՛լիֆի չօգտան պէրի՛ հիմնէ՛թը մախպուսէլէրինէ արզը իհ. թիրաճ խալիօրտը ելն. »։ Ինչպէս վերեւ դիտել տուինք, կը հասկցուի որ՝ առանց բառականաչափ պարսկերէնի և «արաբերէն»ի, կուրիկ թրքերէն գրել «անկարելի» է, և թէ Նաճի լեզուական ճաշակը ու բարեշրջման տեսակէտը տարբեր էր, ինչպէս իր ներդրութիւն լեզուն մատնանիշ կ'ընէ իր լեզուական ու գրական սկզբունքը: Այսօր օսմաներէնի մէջ գործածուած ո՞ր արաբ կամ պարսիկ բառը կայ որ՝ իր նախնական նշանակութեանէն քիչ շատ տարբեր կերպով և այլ պարագաներու մէջ գործածուած չըլլայ: Ուստի, ինչպէս ամէն լեզու՝ նոյնպէս Օսմաներէնը իւրացումի իրաւունքը կատարելապէս ունի. արարը պարսկէն, պարսկին լալ արութէն առած բառերին՝ ինչպէս որ իւրացուցած են՝ Օսմաներէնն ալ ի հարկէ այս լեզուներէն փոխ առած բառերն ուղածին պէս կրնայ իւրացունել: Նաճի էֆ.՝ փոխանակ «գէվաթ» ըսելու, մի միայն արաբ բառը առնելով «պաթլար» չէ՞ր կրնար ըսել, «թապիլ» գործածելու տեղ՝ «կիւճլէշալիմէք» ելն, չէ՞ր կրնար ըսել: Այս տեսակ գործածութիւնները շատ լաւ կը պարզեն իր գեղագիտական ճաշակը՝ և կը կարծենք թէ՛ առանց այդ գեղագիտական ճաշակին՝ լեզուին «իւրացուցած» ազնուութիւնը պիտի վնասուէր: Կը հարցնենք թէ գաւառաբարբառները պիտի կրնանո՞ւ և պիտի կրնանո՞ւ այս հրատարակը առնալ՝ տարուկայ չկայ որ քանի մը «նպատակայարմալ» դատաւարական բառերով՝ բաղձացուած այդ մեծ փոխաբերութիւնն ի գործ դնելու փորձը՝ անակ միտի չլինելու անյարմար առաջաճներով չքեղ սպաւրտնք մը կու-

ուսցանելու ծիծաղելի ձեռնարկին համազոր է: Թուրք վիպասան-գրագետ Ահմետ Բասիմ էֆ. ի այս մասին գրած հմտալից յօդուածէն միս մը քաղել աւելորդ չենք նկատեր. «Սատէ եղալըմ, փէքիյի, ֆազաթ պու թէմէննինն նաղըզ օլտըլը միւշքիլաթը տէֆի իթմէք իչուն պիրազ տէրինճէ տիւշիւնէլիմ. իւմէթին պէշ ալթը աորտան պէրի՝ հըսայաթու իհթիրասաթընա թէրճէման էտինտիկի քէլիմաթա, նէզահէթը ուսլուպ (մաքուր եղանակ, ձեւի մաքրութիւն) վէ իֆատէ տէնիլէն մէզիյէթը էտիպանէյի իւլա իչուն՝ օղրաշուպ պուլաուզը սանայի լաֆիլիյէ վէ մանէվիյէյէ՝ քէլամըն հըսու վիւճտան իւզէրինտէ հասըլ իթտիկի թէսիրաթը խարիֆայը իտամէ իտէճէք վէսաիզը իգնայիյէէէ մուգապիլ քէլիմաթ, ուսլուպու սանայի վէ վէսաիզ պուլարազ սատէ եազալըմ. էվվէ էմիտէ շու նօգթայի միւհիմէյի էլէ ալալըմ քի՝ լիսանտա հէր քէլիմէ մանայի հագըզըը իթիպարիլէ միւսթա՛մէլ տէյիլ տիր» (Մալ. «179րդ թիւ», էջ 1189):

Արդարեւ ամէնուն հասկնալիք բաներն՝ ամէն մարդու հասկցած լեզուով պէտք է գրուին. սակայն ամէն բան այս ճամբով չկրնար գրուիլ, որովհետեւ թուրք գրական լեզուն բոլորովին պարզել հնար չէ. այսինքն թէ բարձր մտածութիւններ պարզ կամ ամէնուն դիւրահասկնալի օտմաներէնով չէ կարելի գրիլ: Օտմաներէնի մէջ նիւթական շատ բառեր կան, բայց՝ վերացական կամ բարոյական կողմը շատ տկար ըլլալով՝ արաբերէն ու պարսկերէն լեզուներուն անկարօտ չկընար ըլլալ, և հետեւաբար ուրբէն պարզ գրութիւն մը ընդունուած ատենն խի՛ մեծ դժուարութիւն մը հարթուած չալտի ըլլայ. քանի որ սոյն երկու լեզուներուն բառագիտութիւնը սորվիլ անհրաժեշտ է:

Գալով ուղղագրութեան՝ նախնի ժամանակներու թուրք բառերը գրելու համար, արաբերէնի ուղղագրական գրութեան հետեւելով՝ (علاق) բառը (علاق) (علاق) (علاق) ձեւով կը գրեն եզեր. այս պատճառաւ՝ թուրք գրականութեան վաղեմի երկերով պրազը անձինք, այսօր, ասոնց ուսումնասիրութեան մէջ չափազանց դժուարութիւն կը քաշեն: Արար ուղղագրութեան համաձայն գրուած թուրք բառերու ընթերցանութեան

դժուարութիւնը՝ կանուխէն գգալի ըլլալով՝ հիճրէթի 1000 թուականէն վերջ՝ գրուած ուսումնական և գրական հեղինակութեանց մէջ, մինչեւ պատիճան մը՝ ուղղագրական տառերու (حروف) գործածութիւնը սկսուած է: Թուրք գրականութեան վաղեմի ներկայացուցիչներէն «Նախմա» (1065—1128) պատմութեան նայելով Շէյխ-Իւլ-Իսլամ Պէհայի էֆ. իր ժամանակին կառուցուած բարենպաստ հաստատութեանց մէկուն համար ժամանակագրութիւն մը (թարիխ) խմբագրելով՝ ստիքերոնին (մըսրա) Գ. զէմքը (قيد) (قيد) կը գրէ. իր ժամանակի գրագէտները կը պնդեն որ «գըլտըն՝ առանց (قيد) «قيد» գրուիլ պէտք է՝ և լի է այսպէս՝ թուականը ամբողջացնելու համար՝ (قيد) աւելցնելով գըրուած ատեն՝ ժամանակագրութիւնը այսպանելի պիտի ըլլար: Երբ խնդրը Պէհայի էֆ. իականջը կը հասնի՝ (قيد) ձեւով առանց (قيد) գրուելուն սխալն ապացուցելով՝ առարկողները կը լռեցնէ: Սոյն եզրութեան վերջիչումով նպատակով ուղղագ. տառերու ի վերջոյ ընդունուած ու գործածուած ըլլալը ցոյց տալ է: Այսօր՝ ամէն նորասէր գրագէտ՝ ըստ կամա՝ թրքերէնի համար տեսակ մը ուղղագրութեան գրութիւն ունի, անանկ որ այլ ևս քիչ մը ծայրայեղութեան տարուած է: Այս մասին ալ Կարապետեան էֆ. ի կարծուից ենք՝ կառավարական շրջանակաց մէջ ընկալեալ գրութիւնը միայն ուսուցանելու մասին:

Ամիսփելով մեր խօսք՝ մենք ալ՝ մեր կարգին՝ կը յայտարարենք թէ՛ թուրք լեզունին բարեշրջումն և ուղղագրական որոշ և ուղիղ գրութիւնը՝ զոր կը սլահանջեն շատեր՝ ձեռնհաս թուրք գրագէտներու կաճառի մը կը կարօտին:

Ուսուցիչ Օսմաներէնի. (Ի Գպրեվան),
Ս. ԹԱՊԱԳԵԱՆ

ԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆ

ԲՐԻՆՁԻ ՄՇԱԿՈՒԹԻՒՆԸ

(Շար. ԹԻւ 57 էն)

—o—

Յանք.—Նորաշէն որիգաստաններու համար ցանքը կը կատարուի ընդհանրապէս ապրիլ ամսոյ մէջ. իսկ երկարատեւ ոռոգումներով հողը սկսած հին որիգաստաններու ցանքը կը կատարուի մայիսի մէջ, որպէս զի մինչեւ այն ատեն արեւու ճառագայթներու ազդեցութեան տակ տաքան:

Սերմի քանակը կը տարբերի որիգաստանի սլայմաններուն համեմատ: Եթէ հողը կաւային՝ կոչուն է, և ի նորոյ որիգաստանի վերածուած, իւրաքանչիւր տեղական արտափարի համար 12 քաշ որիգ կը գործածեն իւրեւ սերմնացու. իսկ հին որիգաստաններու համար 10 քաշ, եթէ այդ տարին աղբուած ըլլայ, և կամ ջուրը տղմուած ըլլայ:

Որիգը ցանելէ առաջ, պարիներու մէջ կը լեցնեն, և 8—10 ժամ ջուրի մէջ թրջոց կը դնեն, յետոյ կը հանեն և կը կաթկթցնեն:

Սերմնացանը բոսիկի ուղքով կը մանայ լճարտերուն մէջ՝ ուր արդէն ջուրը կառուած, կ'ուռգուի, և ցորեն ցանելու պէս կը ցանէ որիգը. իր առջեւէն ձի մը կ'երթայ, որու լծուած է ծանր և խոշորիկ տափան (սիւրկիւ) մը, որ կը ծառայէ հողը մակհարթելու: Յանուած հունաբերը կը ծածկուին տիղմով, երբ ջուրը շարժելէ դադարի:

Մշակութեան ժամանակ.—Հողը և ջուրը տաքցնելու, և ծրարակութիւնը օժանդակ համար, ցանքէն 2—3 օր վերջը լճարտերու ջուրը կը պարպեն, և անոր մուտքը կը գոցեն. այնպէս որ՝ հազիւ թէ հողին երեսը ջրով ծածկուած կ'երեւայ: Երբ նորաբաղր թունկը իր առաջին տերեւները արձակէ, այն ատեն ջուրը կը բարձրացնեն, որպէս զի՝ հողը շատ ցի տաքնայ: Եթէ որիգաստանը միջատներու ասպատակութեանց ենթակայ է, որոնք նորաբաղր թունկերը կ'ոչնչացնեն, ջուրը բարձրովին կը կտրեն, զանոնք անէացնելու համար: Բայց ընդհանրապէս, առաջին տերեւներու երեւումէն յետոյ, ջուրը աստիճանաբար կը բարձրացնեն, և իրենց զարգացման

համաձայն՝ եթէ ջուրը շատ պաղ չէ, կը բարձրացնեն մինչեւ իր վերին աստիճանին, որ պէտք է ըլլայ 11էն 16 հար.մեդր: Եթէ այդ միջոցին հողը աստիճանաբար լիցնէ, իսկայն ջուրի մակարդակը կ'իջեցնեն, և հազիւ մէկ երկու մասնաչափ բարձր կը թողուն, որպէս զի՝ ալիքները արմատախիլ չընեն որիգները, որոնց արմատները շատ թեթեւօրէն կ'ապուած են հողին:

Գէշ խոտերը շատ շուտով երեւան կու գան ջուրին երեսը. ասոնց մէջէն ամենէն վտանգաւորը և յաճախ տեսնուածը՝ «աքլորտոտիկ կորեկ»ն է (լիւրինձ տարրը—pied-de-coq—panicum crus-galli), որ բրինձէն աւելի շուտ և շատ կ'ածի, և իր տերեւներու նմանութեամբ, թերաւարժ աչքերը շուտ կը խաբէ. երբեմն այն աստիճան շուտ կ'ըլլայ, որ գրեթէ ամբողջ հունձքը ի դերեւ կը հանէ: Ահա այս սրտճառաւ, քաղհանը՝ (խոտերը մաքրել) անհրաժեշտ պէտք մ'է որիգաստաններու համար՝ իրենց մշակութեան տուն: Աքլորտոտիկները ոչնչացնելու համար, որիգը տախալին իր ցողունները դուրս շարձակած, գործաւորներ կը մանեն ջուրին մէջ, և ձեռքով կը փրցունեն այդ և իրեն նման գէշ խոտերը: Այս գործողութիւնը թէեւ դժուարին, ապաւոյժ և բազմածախ է, բայց գոհացուցիչ հունձք մը ստանալու համար, հարկեցուցիչ պէտք մ'է. մանաւանդ որ, անգամ մը եթէ որիգաստան մը լաւ մաքրուի իր մէջ գտնուած գէշ խոտերէն, մէկ քանի տարիներ շարունակ դերձ կը մնայ անոնցմէ: Բայց եթէ ուզուի միշտ մաքուր և օտար հունտերէ վերձ բրինձ հասցնել, պէտք է, սերմնացու որիգը ցանելէ առաջ մաղել և խաբիալել:

Աքլորտիկէն զատ, որիգաստաններու մէջ կը բուսնին նաեւ կնիւն (սապ), եղէգ (գամբշ) և իրենց տեսակները: Ասոնց քաղհանը կը կատարուի ընդհանրապէս ձմեռը՝ որիգաստանները պատրաստելէ առաջ:

Երբեմն կը պատահի որ, բուսականութեան միջոցին, որիգի ցողունները արձակուած ատեն, կը ծնգին և կը դեղնին. այս պարագային՝ պէտք է լճարտերու մէջէն ջուրը պարպել, և արեւին ճառագայթներուն անմիջական ազդեցութեան ենթարկել, որպէս զի իրենց կորովը վերստանան:

Ուրիշ անգամներ ալ անոնստովոր կերպով տերեւները կ'աճին, ցօղունները չուտ մը կը բարձրանան, և խիտ մոյգ կանանչ գոյն մը կ'ստանան։ Այս վիճակին մէջ տունիը չափազանց պարարտացած ըլլալով, անկարող կ'ըլլայ իր հատիկները կազմելու, և քիչ շատ կազմուածներն ալ մանր և ճուրճ կը մնան։ Այս արտակարգ աճումը յառաջ կու գայ այն ստեղծ, երբ որիզատանը չափազանց կերպով պարարտ կ'ըլլայ, և ջուրն ալ դանդաղորէն հոսելով, հեշտ տաքութիւն մը յառաջ կը քերէ, որով տունիը նոստատուոր պայմաններու մէջ, իր ստացած բոլոր սնունդը կը նստածէ տերեւներուն մէջ։ Այս անպատեհութեան առաջքը առնելու համար, երկու միջոցներու կը դիմեն. կամ ջուրի հոսանքը քիչ մը կը փութացնեն, որպէս զի տաքնալու ժամանակ չունենալով, աճումը նուազի, և կամ ընդհակառակը՝ հոսանքը բոլորովին կը դադարեցնեն, որ արտասովոր կերպով տաքնալով, տունիը ակարացնէ։ Առաջին միջոցը կը կիրարկուի, երբ առատ ջուր գտնուի սրահադրելի։ Իսկ երկրորդը՝ երբ ջուրը քիչ ըլլայ։

Երբ այս անպատեհութեան առաջքը առնուի, այն ատեն՝ կրկին ըստ առաջնոյն ջուրը կը պտտցնեն որիզատանին մէջ, միշտ որչեպէր բարձրութիւնը պահելով։

Երբեմն՝ որիզ մշակուած տեղեր, երկրագործները իրենց ջուրը պարբերաբար կ'ստանան. այնպէս որ՝ ջուրի ընթացքին վրայ մէկ քանի որիզատաններ գտնուելով, ջուրը՝ իւրաքանչիւրին կարգաւ կը բաժնուի, 6, 8 կամ 10 օրը անգամ մը։ Այս պարագային, երբ ջուրը կազուի, պէտք է որիզատանը ոռոգել, և բոլոր անցքերը գոցելով, կարելի եղածին չափ երկար ստեղծ պահել ջուրը՝ լճարտերուն մէջ։ Փորձով հաստատուած է որ, այսպէս պարբերաբար ոռոգուած որիզատանները գոհացուցիչ հասոյթներ կու տան, մինչեւ իսկ եթէ անոնք 5, 6 օրեր չարունակ առանց ջուրի մնան, մահաւանդ՝ եթէ հոգը կուտային և կ'աչուն է։

Որիզները տակաւին իրենց հատիկերը չի կապած, եթէ աքլորատիկները անոնցմէ առաջ բուսներով, ամբողջ որիզատանը ծածկեն, պէտք է գործաւորներ մանգաղով լճարտերու մէջ մտնեն, և որիզի ցօղուններ

ընեն բարձրութեամբ հնձեն աքլորատիկները, որպէս զի՝ թէ որիզները ապառ մնալով բարձրանան, և թէ՛ աքլորատիկները իրենց հունտերը կապելով, հունձքը չի վնասեն։

Որիզը հասունցած կ'ըլլայ, երբ հատիկը դէպ ի վար խոնարհելով, կարմրաթուր դեղին գոյն մ'ստանան. այդ միջոցին, հատիկները եղունգով կը կտրին, առանց կաթնային հեղուկ մը արտադրելու։ Բայց որովհետեւ բոլոր լճարտերու ցանքը, հաւասարապէս միեւնոյն ատեն չեն հասուննար, պէտք է նախ հասունցածները հնձել, և սպասել, մինչեւ որ միւսները իրենց կարգին հասունան, և այնպէս հնձել։

Երբ հնձելու ժամանակը մօտենայ, ջուրը կը կտրեն, և որիզատանի ծակերը բանալով, իր մէջ գտնուած ջուրը կը հոսեցնեն, և կը չորցնեն։ Գօղունները կը հնձեն մանգաղով, որայ կը կազմեն, կամ խուրձ կապելով, կալը կը տանին, ուր կը կանգնեն կամ ջրիով (ձեռնասփռ) ձեծելով, կամ կենդանիները (ձի կամ եղ) օրանին (կալին մէջ չորջանակի տարածուած որաներուն ամբողջութեան այսպէս կ'ըսուի) վրային անցնելով և թնթել տալով։

Երբ կանգնելու դոյնողութիւնը աւարտի, ցօղունները կը գտնեն հատիկներէն, այս վերջինները մէկ տեղ մը կը կուտակեն, և անմիջապէս կ'օկուին հոսելու (երենը = սաւորմաք)։


Այսպէս մաքրուած որիզի հատիկները կը չորցնեն կամ արեւին տակ, և կամ տանիքի մը ներքեւը տարածելով, ուր գործաւորներ ձեռքի փոցներով (թըրմք) շարունակ կը խառնեն և տակնուվրայ կ'ընեն, մինչեւ որ չոր և կարծր ըլլան, ինչ որ դիւրութեամբ կը հասկցուի, մէկ քանի հատիկներ ակառայով կ'ոտրելով։ Այս գործողութենէն վերջը, երբ տարբեր մեծութիւնով մաղերէ կ'անցնեն, բոլորովին մաքրելու համար։

Ինչպէս գիտենք, հատիկները իրենց այս վիճակին մէջ տակաւին կեղեւով մը ծածկուած են, և կը կոչուին որիզ. երբ այս կեղեւները իրենց վրայէն զտուին, այն ատեն կը ձերմկին և կը կոչուին բրինձ։

Հիմա կ'ուզէք հասկնալ թէ, որիզի կեղեւները հանելու, մաքրելու համար երբէն (այս գործը շատ տեղեր ԴՆ կը կոչեն)

զատ, աւելի կատարեւագործեալ գործիքներ կան թէ ոչ:

Երկու տեսակ մեքենաներ կրնանք յանձնարարել ձեզ, որոց առաջինը փոքր քանակութեամբ որից ցանոյներու կը յարմարի, իսկ երկրորդը՝ ընդարձակ մշակութեանց:




Ա.—ՈՐԻՁ ՄԱՔԻՐՈՂ, ՋԵՌՔԻ ԹԱԿՆՈՅ (ԳԻԿ)

Ենթադրեցէք փայտէ կոնաձեւ կոճղ մը (ա), 1մ,60 (160 հար.մեդր=սանդիւմ), կամ 2մ,27 (227 հար.մեդր) երկայնութեամբ, յատակի տրամագիծը 1մ,62, և վերինը 0մ,32՝ կամ 0մ,40: Այս կոճղը կը շինեն՝ իրարու լաւ յարմարցուած, սոսինձով փակցուած, և խոշոր դամբերով իրարու ամրապէս զամուած, հաստ և զօրաւոր փայտերէ, որոն կանոնաւոր կըսրութիւն և ուղղութիւն մը տալու համար, ճախրոցէ (թօռնո=չարք, չըբլըք) կ'անցունեն: Այս կոճղին արտաքին երեսին վրայ, վերէն վար, վայրահակ, արտացից, և իրարու զուգահեռակտն ակօսներ բացուած են սանդուխի մը ձեւով: Ակօսներուն խորութիւնը 0մ,003 (3 հազորդամեդր=միլիմեդր) է, և իրարմէ ունեցած հեռաւորութիւնին 0մ,009 կամ 0մ,011 (9 կամ 11 հազ.մեդր) է: Այս կոճղը իր յատակը գտնուած խարիսխովը (բ) ամրապէս հաստատուած է քարուկէր հիմքի մը մէջ (գ. գ.):

Նոյնպէս կոնաձեւ, սնամէջ, և ճիշդ Ա. կոճղին վրայ պատկանող կնգուղ (քիւլահ) մը (Դ), զոր կը շինեն ճիշդ տակառի մը պէս իրարու քով յարմարցուած հաստ փայտերէ՝ կ'անցունի Ա. կոճղին վրայ: Այս կնգուղին մէջի երեսը գտնուած ակօսները՝ Ա. կոճղին ակօսներուն հակադիր կ'ըլլան: Կնգուղը

դուրսի կողմէն ամրացած է վերէն վար 5-6 երկաթէ շրջանակներով, և կոճղին վրայ կը հաւասարակշռուի՝ կոճղին կեդրոնը հաստատուած հեղույսով (boulon=ճիւլաթա) մը, և իր վրայ կը կրէ դոխ (տէյրովէն սէփէթի, կամ հունու) մը (ե): Դոխին յատակը մէկ քանի ծակեր կան ծակուած, որոնցմէ որիցը կը համր՝ կնգուղին և կոճղին մէջտեղ, ուր շփուելով իրենց կեղեւներէն կը դատուին: Այս շփումը յառաջ բերելու համար, երկու հոգի, կնգուղին երկու կողմը զէմ առ զէմ գտնուած թեւերը կը շարժեն մէյ մը առաջ, մէյ մը դէպի ետեւ, շարունակ կէս շրջան ընել տալով կնգուղին: Դոխին յատակը յարմարցուած է մասնաւոր կախարիչ մը, որ կը ծառայէ ծակերը բանալ գոցելու, որով և հոսող որիզներուն քանակը ճշգրտու: Այս թակնոցը քիչ շատ փոխոխութեամբ կարելի է ամէն տեղ շինել, և փոքր մշակութեանց համար ամենէն յարմարագոյնն է:



Բ.—ՈՐԻՁ ՄԱՔԻՐՈՂ, ՇՈԳԵՇԱՐԺ ԹԱԿՆՈՅ

Երկու հոգիով օրական 200 քիւօ բրինձ կըրնայ մաքրել դիւրութեամբ, մաքրուած բրինձը, կեղեւները և թեփը ամէնքը խառն դուրս կ'ելլան, զոր պէտք է յետոյ մաղէ անցնել: Եթէ կնգուղը կոճղին վրայ լաւ ճշգրտի, ու որիզներն ալ միշտ կանոնաւոր կերպով հոսին, կոտորուքը շատ աննշան կ'ըլլայ:

Երկրորդ մեքենան, որ միւսէն աւելի կատարելագործեալ է, կը յարմարի ընդարձակ մշակութեանց: Շէնքը և դրութիւնը անգղիական է:

Շողեշարժ կամ ջրաշարժ մեքենայով կըրնայ բանիլ, և 5 ձիազօր ուժի պէտք ունի: Մէկ ժամուան մէջ 5—600 քիւօ որիզ կը մտնէ, և բրինձը մէկ անգամէն կը զատէ թեփէն և կեղեւներէն:

Այս թակնոցը՝ որ Մ. Յ. Մուրատեան եղբայրք վաճառատունը կը գտնուի, Թօսեաի կոյմը այժմ ընդհանրացած է, ուր ընդարձակ տարածութեանց վրայ բրինձի մշակութիւն կը կատարուի. գինը 85 օսմ. ոսկի է:

Որիզի ցօղունները թէեւ կենդանիները կ'ուտեն, բայց միւս յարգելիքը չափ սննդաւորար չ'ըլլալուն, չի յանձնարարուիր: Կեղեւները և թեփը կը տրուին կաթնաու կովերու:

Որիզատաններու հասոյթը շատ կը տարբերի, տեղւոյն կլիմային, հողին և մշակութեան եղանակին համեմատ: Ամենէն աննպաստ պարագաներու մէջ, իւրաքանչիւր արտավար 150 քիւօի չափ որիզ կ'արտադրէ, իսկ ամենէն յուռթի հունձքը կը հաւասարի 450—500 քիւօի՝ մինչեւ: Միջին հաշուով, որիզատանները կ'արտադրեն սովորաբար 300 քիւօի չափ:

Կեղեւը՝ բրինձին կէսը կը կշռէ. 100 քիւօ որիզ եթէ մաքուրի, 50 քիւօն կեղեւ, 50 քիւօն ալ բրինձ կ'եղայ: Իսկ ցօղունները հատիկներէն աւելի կը կշռեն. 100 քիւօ որիզ 130 քիւօ ցօղուն կը թողու: Մէկ արտավարէն 380—400 քիւօ ցօղուն կ'առնուի:

Ղ. ԲՈՒԱՏ

ՏԱՐԵՐՔ ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ

Գ Լ Ո Ւ Խ Ե.

ԲԵՂՆԱՒՈՐԻՉ ՆԻՒԹԵՐ

(Շար. թիւ 57 էն)

5. ԿԱՆԱՆՉ ԱՂԲԵՐ

Երբեմն իւր արգասաւորիչ նիւթ կը գործածենք ծաղկելու մօտ եղող մշակուած բոյ-

սերը. այս արգասաւորիչ նիւթը կը կոչուի խնուլ աղբ:

Այս բոյսերը ընդհանրապէս չուտ կ'աճին, առատ տերեւներ ունին և իրենց սնունդին մեծ մասը կ'առնեն օդէն կամ ենթահողէն:

Կանանչ աղբերը յարմար են չոր, թեթեւ հողերու՝ որոնց մէջ դիւրուէ կը տարբաւոր դրուի և մշակութեան վրայ իւր բարերար ազդեցութիւնը կ'ընէ: Կաւային հողերու մէջ՝ այս աղբերը դժուարաւ կը տարբաւորուին:

Կանանչ վիճակին մէջ իւր աղբ թաղուելու ամենէն յարմար բոյսերն են սիսեւը, երեքնուկը, աուոյսը, կանճրակը (colza), սեւահատ ցորենը (sarrasin), և այլն:

6. ՈՒՐԻՇ «ԱՐԳԱՍԱԻՈՐԻՉ» ՆԻՒԹԵՐ

Շատ երկրագործներ կը գանգատին աղբի պակասութենէ. բայց գիտէ՞ք որչափ արգասաւորիչ նիւթեր կան անոնց ձեռքին տակ, չորս կողմը՝ զոր առանց իսկ զգալու կը կորանցնեն:

Միթէ բուն աղբէն զատ ուրիշ արգասաւորիչ նիւթեր չկան: Օրինակի համար, շատ մը բոյսերու ցօղունները զոր հաճոյքի համար կ'այրենք. մոխիրը, պտուղներու կեղեւը և հաւկիթի պատեանները, պտղատու ծառերու համար ընտիր և ազդեցիկ են:

Խաղողի չանջը (ճիւղի) որ շատ յարմար արգասաւորիչ մ'է որթատունկին համար: Ստուած անասուններու դիակները, լուացքի ջուրերը, ոսկորները, ճամբաներու հողը և փողոցի ու տան աւլըտուքը, ծառերու տերեւները, գետնախնձորի, ճակնդեղի, չողգամի, ստեպլինի ցօղունները և տերեւները, մարդոց աղբը՝ որ այնքան զօրաւոր է, մորթուած կենդանիներու արիւնը, եղջիւրները, մազերը, բուրդը, քուրջերը, հին լաթերը, կաշիի կտորները, թռչուններու փետուրները և ասոնց նման դեռ շատ և շատ նիւթեր հողին համար ընտիր պարարտեցուցիչ նիւթեր են և ամէնքն ալ գրեթէ կը կորսուին մնալով ճամբաներու վրայ, փողոցներուն մէջ կամ ծովեզերքը՝ ապականելով գիւղին կամ քաղաքին օդը, և ծնունդ տալով շատ անգամ կարգ մը հիւանդութեանց:

Խելացի երկրագործը խնամով կը հաւաքէ բոլոր այս նիւթերը, որոնց համար գրեթէ բան մը չ'վճարեր և կամ շատ չնչին ծախք

մը կ'ընէ, զանոնք իւր արտին մէջ կը թաղէ և այս փոքրիկ աշխատութեան և զոհողութեան փոխարէն միշտ առատ հունձք մը կ'ունենայ, որով եթէ չհարստանար գոնէ իւր բարեկեցութիւնը կ'ապահովէ:

7. ՎԱՃԱՌԱԿԱՆԱԿԱՆ ԱՂԲ

Վաճառական կամ արհեստական աղբ կը կոչուին այն հանքային կամ մարդոց ձեռքով պատրաստուած արգասաւորիչ նիւթերը՝ որոնք սովորական աղբէն աւելի գորտուր և ազդեցիկ են: Մեր երկրագործութեան մէջ ասոնք դեռ անգործածելի մնացած են որով անծանօթ են, մենք միայն ասոնց անունները տալով պիտի գոհանանք:

1. Մարդային փոխարէն աղբ:

2. Աղբիւնիւն աղբ՝ որ աղանաւորներէն կը հաւաքուի:

3. Կոշտի՝ որ թռչուններու դիպուած ծիրարն է:

4. Վերջապէս հանքային արգասաւորիչ նիւթեր կամ տարրաբանական աղբ, որոնք հանքային նիւթեր են և կը պարունակեն մեծ քանակութեամբ բորակածին, կամ ֆոսֆոր և կամ բորաք:

8. ԵԶՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Երկրագործութեան մէջ մարդուն նպատակակէտը պէտք է լինի տնտեսագիտութեան առատ և ընտիր հունձք մը առաջ բերել, այս նպատակին հասնելու համար անհրաժեշտ է որ հողը լաւ աղբուի:

Երկրագործին գլխաւոր ջանքերէն մին պէտք է ըլլայ առատ աղբ հայթայթել, ասոր համար պարտի բազմաթիւ ոչխար, տաւար և զանոնք առատօրէն սնուցանելու համար բաւական մարգագետին ունենայ:

Այս սլարագային մէջ վաճառականական աղբի պէտք չունենար և իրեն պակասած աղբին տեղը կրնայ գործածել կենդանիներու դիակներ, աւլուր, ոսկոր և այլն և այլն:

Ա Մ Փ Ո Փ Ո Ւ Մ

1. Բեզմարիչ Նիւթերը բոյսերու սնունդը կը կազմեն և առատ հունձք կու տան:

2. Հող աղբիւն ըսել է հողին վրայ աւելցնել բոյսերուն տնտեսական օգտակար նիւթեր:

3. Բարսիւնի նպատակն է հողին թերութիւնները չտկէլ անոր հետ խառնելով կիր, մարնահող, գաճ, աւաղ, կաւիճ և այլն:

4. Բեզմարիչ նիւթերու մէջ առաջին տեղը կը բռնէ աղբը, որ կազմուած է կենդանիներու աւելցրչներէն և անոնց փակը իբր խշտի տարածուած յարգէն:

5. Մեզ իւր պարունակած բարակածինին համար բոյսերուն շատ օգտակար է. պէտք է խնամով փոխվել զայն:

6. Ախուրն գետինը պէտք է սպալստակել. կամ կաւով լաւ մը ձեփել:

7. Աղբը երկար պտեն մնալու չէ ախուրն մէջ, պէտք է զայն գիպել բակին մէջ կամ տան մօտը, յատկապէս պատրաստուած տեղ մը որ թէ չորս կողմէն և թէ վերէն պաշտպանուած ըլլայ, տաք օրերը պէտք է մէկով այդ աղբը ուսողել:

Աղբը արտին վրայ երկու կերպով կը գործածեն. կամ հողին մէջ թաղուած և կամ հողին երեսը կը տարածեն:

8. Եթէ ախուրն աղբը պակտի, կարելի է ուրիշ նիւթերու գիմել (վաճառականական աղբ և այլն) որոնք գարձեալ շատ օգտաներ ունին:

Վ Ա Ր Ժ Ո Ի Թ Ի Ի Ն Ն Ե Ր

Խթութեւն Նիւթ.— Մօտակայ ագարակ մը դացած էք, հոն աղբի կոյտեր կը տեսնէք ասդին անդին անխնամ: Հիմա վերադարձին նամակ կը գրէք ձեր մէկ բարեկամին ու կը յայտնէք ձեր կարծիքը այնպէս անխնամ թողուած աղբերու մասին, և կը բացատրէք թէ՛ երբ հոգ տարուին աղբակոյտերուն, ի՞նչ օգուտներ երկրագործն կը քաղէ:

2. Ընէք թէ որոնք են այն բեզմարիչ նիւթերը, զոր երկրագործն ամէն օր կը կործնցնէ կամ կարեւորութիւն չտալով անոնց, կամ անոնց օգտակարութեան վրայ գաղափար չունենալով. և բացատրեցէք թէ ո՞ր պարագաներու մէջ մեծ ծառայութիւն կը մատուցանեն այս նիւթերը երկրագործին:

ՓՈՐՁԵՐ ԵՒ ՈՒՍՈՒՄՆԱՐՇԱՆՆԵՐ.— 1. Պարտեզին մէկ անկիւնը կտոր մը հողի մէջ ցորենի հունտեր սերմանել, և մէկ մասին վրայ աղբ աւելցնել. տարբերութիւնը ցուցնել:

2. Զուտ կաւի մէջ գարիի քանի մը հատիկ դնել և միեւնոյն չափով կաւի հետ բաւական կիր և աւաղ խառնելով նորէն գարի սերմանել և արդիւնքները ստուգել:

3. Զուտ աւաղի և կրահողի մէջ ծաղիկի հունտեր սերմանել, ուրիշ տեղ մը նոյն հողին հետ խառնել տան և փողոցի աւլուրը և տարբերութիւնը տեսնել:

4. Մօտակայ արտ մը այցելել որ գարնան կամ աշնան կ'աղբուի: Դիտել աղբուի եղանակը և զիտողութիւններ յայտնել:

ՍԻՆՈՒՄ

Մ. Կ. ՄԱԼԱՔԵԱՆ

ՃԱՐՏԱՐԱՐՈՒՆՍՏԱԿԱՆ

ՆԵՐԿԱՐԱՐՈՒԹԻՒՆ

(Շար. ԹԻԼ 57 ԷՆ)

Եւրոպեյ լրանալէն վերջ, կաթնային յատու-
կը գտնուած ծորակը կը բանան, ուրիշ կրա-
շիճը դուրս կը հոսի. բայց միեւնոյն ատեն
պէտք է իւր վրայ գտնուած ծորակն ալ բա-
նալ, և առանց պատառները տեղափոխե-
լու, մաքուր ջուր հոսեցնել վրան, մինչեւ
որ յատակէն ելած հեղուկը քիչ շատ յոտակ
ըլլայ :

Այդ միջոցին կաթնային կափարիչը կը
բանան, և պատառները դուրս հանելով
ցայելու գործողութեան կ'ենթարկեն, որ
Եւրոպայի մէջ կը կատարուի մասնաւոր գոր-
ծիքով մը :

Այս գործիքը պարզապէս Գ. կարասին
պէս կարաս մ'է, որուն յատակը զետեղուած
է գլանիկ մը, հատ մ'ալ վերի կողմը, որոնք
շեղակի կերպով վարէն վեր դէմ առ դէմ կը
գտնուին, և Գ. կարասի եզերքը հաստա-
ռած կաշմածին պէս կաշմած մ'ալ ասոր
եզերքը կը գտնուի՝ միայն զոյգ մը խոշոր
գլաններով : Պատուաբը այս գլաններուն
վրայէն և մէջէն մէկ քանի անգամներ անց-
նելով դառնալով, իր վրայ գտնուած կիրի
մեծագոյն մասը թող կու տայ : Ջուրը պէտք
է շարունակ վերանորոգուի. այս պատճառաւ
կարասին յատակը ծորակ մը կ'ըլլայ, զոր
բաց կը թողուն, ինչպէս և վրան գտնուած
ծորակն ալ, որու բերնէն ջուրը ուժգնօրէն
կը հոսի պատառին լայնութեան :

Մեծ ներկատուներու մէջ կը գործածեն
աւելի կատարելագործեալ մեքենաներ, եւրո-
պեյ կատարելու համար. որոնցմով թէ գոր-
ծողութիւնը կը փութացնեն, և թէ աւելի
լաւ կ'ըլլայ. բայց մենք հոս ատոնց վրայ
երկար բացատրութիւններ տալու պէտքը
չենք զգար առ այժմ. և կ'անցնինք մոխրար-
կումէն վերջը եկող գործողութիւնները բա-
ցատրելու :

Ցայումէն անմիջապէս վերջը, պատառ-
ները կ'առաջնորդուին թթւութեան կա-

րասին մէջ : Այս գործողութեան վրայ երկա-
րօրէն խօսած ենք արդէն, «Հանրագիտակ»ի
55րդ թւոյն մէջ, մանածները սպիտակացնե-
լու դրութիւնը բացատրած ատեննիս : Մա-
նածներուն համար թէեւ ոմանք ծծմբական
թթւութեան կը գործածեն, բայց հոս պէտք է
անպատճառ ջրաքլորական թթւութեան գործա-
ծել, որովհետեւ այս թթւութեան կիրին հետ
միացած ատեն, աւելի դիւրահալ բաղադրու-
թիւններ կը կազմէ :

Թթւութեան խտութեան աստիճանը
պէտք է ըլլայ Պոմէի հեղիաչափով 2, կամ
խտաչափով 1,01 :

Գործողութեան տեւողութեան միջոցին
պէտք է ուշադրութիւն ընել որ, թթւու-
տաջուրը ուժէ չիցնայ. այս առթիւ մերթ
ընդ մերթ խտութեան աստիճանը կը փո-
ճեն փութով, որ եթէ ուժէ ինկած ըլլալը
ցուցնէ, նախապէս պատրաստուած և պահ-
ուած թթւութեան ջուր կը յաւելուն ընդունա-
րանին մէջ :

Պատառները կարասին մէջ զետեղուելէ
վերջ, ջրհանով թթւութեան ջուրը վեր կ'առնեն
և կը տարածեն պատառներուն վրայ : Երբ
ամբողջովին կարասը լեցայ, ջրհանը կը դադ-
րեցնեն, և կը թողուն պատառները այդ
փնտրելին մէջ ժամու մը չափ, թթւութեան
լին ազդեցութեան տակ. յետոյ՝ յատակի
ծորակը կը բանան, թթւութեան ջուրը կը հո-
սեցնեն ընդունարանին մէջ, և գործողու-
թիւնը կը վերսկսին այսպէս երեք անգամ :

Թթւարկումէն անմիջապէս յետոյ կը լուան
նախ կարասին մէջ, թթւութեան ջուրը յատա-
կէն կը հոսեցնեն, ծորակը կը գոցեն, և վե-
րէն մաքուր ջուր կը հոսեցնեն, յետոյ կա-
րասէն դուրս հանելով պատառները, ցայե-
լու մեքենային մէջ կը լուան :

Շար.

Դ. ԲՈՒԱՏ

ՃԻՌԱՆ ԱԼԵՐՆ

ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ

ԵՐԿՐԻՍ ԿԵԴՐՈՆԸ

Եւ ոտուգիւ, տակաւ ջախջախուած կը
զգայի ինքզինքս բրոֆէոէօրին փատտերուն
առջեւ. իր կրքոտ ձեւերն ու խանդավա-
ռութիւնը մեծապէս կ'աւելցնէին իր խօսքե-
րուն արժէքը:

«Ուրեմն, Աքսէ՛լ կը տեսնես որ կեդրո-
նական կեդրէին վրայ այլապէս վարկածներ
ստորգրուած են երկրաբաններու կողմէ. ա՛յ
ո՛ր է ստարակոյս պէտք չէ ունենալ երկրի
ներքին ջերմութեան վրայ. ըստ իմ գոյու-
թիւն չունի այդ ջերմութիւնը և չի կրնար
ունենալ. թո՛ղ որ մեր աչքերովք իսկ պիտի
տեսնենք զայն, և Առն Սաքսիլսոնի պէս
մենք ալ վերահասու պիտի ըլլանք այդ մեծ
խնդրին:

Է՛հ, չա՛տ լաւ, պատասխանեցի, իմ մո-
տիւ ես ալ խանդավառուեցի:

— Եւ ինչո՞ւ չէ: Միթէ չե՞նք հրնար մեր
յոյսը դնել երկարական երեւոյթներու վրայ՝
որոնք մեզ լուսաւորեն, և մթնոլորտին վրայ՝
որուն ճնշումը կրնայ լուսաւոր դառնալ որ-
քան երկրի կեդրէին մօտենանք:

— Այո՛, այո՛, ըսի, այդ ամէնը կարելի է:

— Ատիկա սուղ է, պատասխանեց մօրեղ-
բայրս յաղթական ձեւով. բայց լուծթիւն
պահէ այս ամէնուն վրայ. այնպէս որ ոչ ոք
մտադրէ մենէ առաջ երկրի խորը երեւան
րերէլ:

Է.

Այսպէս վերջացաւ այս յիշատակելի նիս-
տը: Դիչ մը առաջ տեղի ունեցած խօսա-
կցութիւնը տեսնուող դարձուց զիս: Ապա-
հար՝ ինքզինքս դուրս նետեցի մօրեղբորս
աշխատութեան սենեակէն. սթափելու հա-
մար բաւականաչափ օդ չէի կրնար գտնել:

Համարկի փողոցներուն մէջ. ուստի էլ-
պայի ափունքը ուղղուեցայ, դէպ ի այն գե-
տանաւին կողմը, որ քաղաքը հաղորդակցու-
թեան մէջ կը դնէ Հարպուրկի երկաթուղի-
ներուն հետ:

Չեմ գիտեր թէ համարուած էի քիչ մը
առաջ լսած իս: Բրոֆէոէօր Լիտէնպրօքի տի-
րապետութեան տակ չէի՞ ինկած միթէ:
Պէ՞տք էի լրջօրէն հաւատալ այն որոշման, ո-
րով մօրեղբայրս մտադիր էր երկրային զան-
գուածին խորը երթալ: Յիմարի՞ մը թէ մեծ
հանձարի մը մահաճութիւններն են որ կը լսէի:
Այս ամէնուն մէջ՝ ո՞ւրից կը սկսէր սխալը,
և ո՞ւր կանգ կ'առնէր ճշմարտութիւնը:

Հաղարուժէկ վարկածներու մէջ կը ծփայի
մատանջ, առանց ո՛ր է գաղափարի մը
կառչելու:

Դիչ մը առաջ համարուած ըլլալ կը թուէի,
բայց հիմա խանդավառութիւնս կը սկսէր
չափաւարիլ. այո՛, քիչ մը առաջ կը բաղձայի
ընդհուպ մեկնիլ և խորհրդածութեամբ ա-
տեն չկորսնցնել: Այն ատեն ամենայն քա-
ջութեամբ պիտի գոցէի պայուսակօ:

Բայց, հիմա, պէտք է խտտովանիլ, գե-
րագրագուման դադրեցաւ. ջիւղերս թուլցան,
ու անդունդներէն երկրի մակերեսը բարձ-
րացայ:

«Անհեթեթ բռն, գոչեցի. ի՞նչ կը նշա-
նակէ աս: Մտացի տղու մը ըլլուելիք լուրջ
առաջարկութիւն չէ ատիկա: Ատոնցմէ և ոչ
մին գոյութիւն ունի: Պարզապէս գէշ քնա-
ցած ըլլալով՝ մի՞ձաւանջ մը տեսեր եմ:»

Էլնայի եզերքին հետեւելով քաղաք հա-
սած էի: Կամուրջը անցնելէն յետոյ Ալթո-
նայի ճամբան բռնեցի: Նախազգացում մը,
արդար նախազգացում մը կ'առաջնորդէր
զիս՝ խիստ նշմարեցի որ իմ մինիսիկ կրաւ-
պէնս թեթեւ ու աշխուժ քայլերով Համ-
պուրկ կը դառնար:

«Կրաւպէն» գոչեցի հեռուէն:

Նորատի աղջիկը քիչ մը այլալաճ՝ կանգ
առաւ, լսելով որ մէկը բարձրաձայն իր անու-
նը կու տար պողոտային մէջ: Տառը քայլա-
փոխէն քովէ հասած էի:

«Աքսէ՛լ, յարեց նէ գարնացումով, դիմա-
ւորելու եկար զիս կարծեմ:

Բայց Կրաւպէնի աչքէն չվրիպեցաւ իմ
մտաւանջ, այլալաճ կերպարանքս:

«Ի՞նչ ունիս, ըստե՛ս ձեռքը երկնցնելով։

— Ի՞նչ ունիս մի, Կրախալէ՛ն, գոչեցի։

Երկու վայրկեան և երեք պարբերութիւն բաւ եղան որ գեղանի վիրանաւորէիս վերահասու ըլլայ կայութեան։ Կրախալէն քանի մը վայրկեան լուռ մնաց։ Չեմ գիտեր թէ ի՞ր սիրտն ալ իմինիս չափ կը արտիէ՞ր, բայց ի՞ր ձեռքը չէր դողար իմինիս մէջ։ Հարկէր քայլի չափ յառաջացանք առանց բռնանիս բանալու։

«Աքսէ՛լ, ըստե՛ս վերջապէս։

— Ի՞նչ է սիրելի Կրախալէ՛ն։

— Գեղեցիկ ուղեւորութիւն մը պիտի ըլլայ ատիկա։»

Այս բառերուն վրայ վեր ցատկեցի։

«Այո՛, Աքսէ՛լ, գիտունի մը քեւորդիին արժանի ճամբորդութիւն մըն է, լաւ չէ՞ որ մարդ ո՛ր և է մեծ ձեռնարկով մը նշանաւոր դառնայ։

— Ի՞նչ, Կրախալէն, չե՞ս արգիլեր զիս որ նմանօրինակ արշաւանքի մը ձեռնարկելու չիորձեմ։

— Ո՛չ, սիրելիս Աքսէ՛լ, ո՛չ մօրեղբայրդ և ո՛չ ալ քեզ. յօժարակամ պիտի ընկերանայի ձեզի, եթէ երբեք ինծի պէս խեղճ աղջիկ մը նեղութիւն չի սպառնաւոր ձեզի։

— Իրա՛ւ կ'ըսես։

— Իրա՛ւ կ'ըսեմ։»

Ահ, ո՛վ կիներ, նորաստի աղջիկներ, կնոջական սիրտեր, միշտ անհասկնալի էք դուք։ Եւ երբ արարածներուն ամենէն երկշտոր ըլլալէ դադրիք, ամենէն քաջասիրտը կը դառնաք։ Բանականութիւնը գործ չունի ձեր մօտ։ Զարմանալի չէ՞ որ այս աղջիկը քաջալերէ զիս այդ արշաւը ընելու։ Հակառակ ինծի նկատմամբ զգացած սիրոյն, կը խրախուսէ զիս ի գլուխ հանելու այդ ձեռնարկը։

Ծուարած մնացած էի, և ի՞նչ մեղքս պահեմ, նոյն խի ամօթապարտ կը զգայի ինքզինքս։

«Կրախալէ՛ն, տեսնե՛ք վաղը այդ լեզուն պիտի գործածե՞ս։

— Վաղն ալ նոյնը պիտի խօսիմ, սիրելիս Աքսէ՛լ։»

Կրախալէնի հետ ձեռք ձեռքի բռնած՝ լսիկ ճամբանիս շարունակեցինք։ Օրուան յուզումներէն ցնցուած էի։

«Ասով հանդերձ կը խորհէի, յուզիս ամ-

սամուտին զեռն չափ ատեն կայ, և մինչեւ այն ատեն, թերեւս աշնալիսի եղելութիւններ պատահին, որոնք կարենան մօրեղբայրս բուժել երկրիս ներքեւը ուղեւորելու մենա-մարտութենէն։»

Մութը կոխած էր երբ Բէօնիկութրասի տունը հասանք։ Կը յուսայի թէ տունը հանդարտ պիտի գտնեմ, մօրեղբայրս սովորականին պէս պառկած՝ և բարի Մարթան իր փետրաւելի վերջին հարուածը ճաշասրահին տալու վրայ։

Բայց հաշուի չէի դրած բրօֆէսէօրին անհամբերութիւնը։ Եւ ահա՛ տեսայ որ կը պոռար կը կանչէր, հոս հոն կը վազվզէր բռնակիրներուն միջեւ, որոնք խել մը կարասիներ կը փոխադրէին փողոցը։ Խեղճ սպասուհին չէր գիտեր գլուխը ո՛ր քարին զարնի։

«Շո՛ւտ հոս եկու՛ր, Աքսէ՛լ, աճապարէ՛, գոչեց մօրեղբայրս հեռուէն տեսնելով զիս. պայռասակդ պատրաստուած չէ, թուղթերս կարգի դրուած չեն, ճամբորդութեան արկ-զիս բանալին կորսուեր է և սռնապաններս մէջտեղ չկան։»

(Շ-բռն-իւն)

Բարեսէր ազգային մը՝ մէկ օրինակ վեցամեայ «Հանրագիտակ» կը նուիրէ ո՛ր և է Ազգ. վարժարանի մը, որու ընտրութիւնը թերթիս անօրինութեան թողուցած ըլլալով, կը զրկենք Գարթալի Ազգ. վարժարանին։

Նիկոմիդիոյ առաջնորդական խնդրոյն նկատմամբ, թեր ու դէմ մէկ քանի նամակներ ստացած է խմբագրութիւնս. բայց որովհետեւ այդ կարգի խնդիրներով զբաղիլ մեր ծրագրէն դուրս է, չուղեցինք հրատարակել զանոնք, և իրենց գոհացում տալու համար, յառաջիկայ շաբթու միայն մեր կարծիքը պիտի յայտնենք համառօտիւ այդ մասին։

Արտօնատէր Ա. ԼՈՒՍԻՆԵԱՆ

Մէկ ԲԱՆԻ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐՈՒ. — Թերթ չի զրկելնուս սրտածառը այն է որ, տակաւին ձեր յեանեալ բաժնեզինները անգամ չէք վճարած. եթէ ձեր վերջին նամակին հետ գտնէ զրկած ըլլայիք. մենք ալ պիտի չարունակէինք թերթ զրկել. այս թերթը կը զրկենք. կարգացէք և ըստ այնմ շարժեցէք:

ՇԲՅՏՐԱ. — Միհրան Լ. Գալիաճեան. — Հասցէի մասին դիտողութիւննիդ ճիշդ է. 50րդ թիւը զրկեցինք:

ԻՍԲԷՉԷ. — Ստեփան Լ. Բարթամեան. — Թարոսեան Մկրտիչ Լ. է ստացած էինք նախապէս մէկ վեցամեայ. ոտոյանք նսեւ Բ. վեցամեայ մ'ալ այս անգամ. թերթերը կը զրկենք ձեր նոր հասցէին:

ԽՕՍՈՒՆԻ. — Ստացած ենք ձեր նամակը և յիշ-գիշը:

ՄԷՐՏԷԿԷՉՁ. — Յարութիւն Լ. Մանթաշեան. — Այո՛, թերթիս ծրագրին համապատասխան հանրագումար հարցումներուն կը պատասխանենք. կ'ըսէք թէ՛ ձեր կողմերու բակլաները, լուրիաները, և ինչ տեսակ մը լուիճէ (բիրէճիք) վարտկուած են, ասոնք մեծ վնաս կը հասցնեն երկրագործներուն, և կը խնդրէք որ այդ միջոտները ոչնչացնելու միջոցներ ցոյց տանք ձեզ: Արդէն նախորդ չրջանի թերթերէն չտեսերուն մէջ այդ կարգի միջոտները ոչնչացնելու համար շատ մը դիւրատար միջոցներ ցոյց տուած ենք. պէտք է գտնաւ լու ուսումնասիրէք:

Լ. ԱՐՍԼԱՆԵԱՆ ԵՒ Ս. ԷՄԻՐՉԷ

Կ. ՊՈԼԻՍ, ՅՆՏՐԼԵԱՆ ԽԱՆԻ ՏԱԿ

Սոյն վաճառատուն պատրաստ է մատակարարել մեծ ու փոքր քանակութեամբ, ամեն տեսակ թարմ գեղորայք. վիրաբուժական դործիներ. Անգղիական և Գաղղ. պատրաստ գեղեր, գօնեակներ, զինիներ և հանրային ջուրերու մեծ մթերք մը յարմար գներով: Լ. Արսլանեան և Ս. Էմիրչէ Բնկերութիւնը երկար տուն անձնական փորձառութիւններ ունին: Ամեն ջանք և աշխատութիւն չեն խնայեր իրենց յաճախորդներն դոհացընելու համար, մասնաւոր ուշադրութիւնը կը հրաւիրենք գաւառաց համար, որոնց կը զրկեն գեղորայք, ամենայն արագութեամբ, թարմ և մատչելի գներով:

ՄԻՋԱՏԱՍՊԱՆ ՓՈՇԻ

Զոր մեծաքանակ բերել տուած է վերոյիշեալ վաճառատունը՝ ուղղակի ճաւնացիայէն:

Մլուկները, լուերը, և ուրիշ ասոնց նման վնասակար միջոտներ վայրկենապէս շանթահար կ'ընեն:

Թարմ. խիստ աղգեցիկ և զինը աժան:



**Կ. ԵՍՎՐՈՒԵԱՆ ԵՒ Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ
ԹԷՅԻ ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ**

Ձինական, Հնդկական և Ճարանական
ամենաընտիր տեսակէ կողող արտագրու-
թիւնները պիտի գտնէք տպահատարար
վերոյիշեալ պատուաւոր վաճառատան
մէջ անհամեմատ աժանութեամբ:

Գաւառներու համար, յանձնարարու-
թիւնները փութով և ճշդիւ կը կատա-
րուին:

Կեդրոնատեղին է. Կ. Պոլիս, Ճէլալ
Պէյ խանի տակ, թիւ 10. այն վաճա-
ռատան ապրանքները ժողովուրդէն զը-
նահատուած ըլլալով, շատեր անոնց
կեղծը հրապարակ հանած են. ուստի
զգուշանալու համար, վերոյիշեալ վա-
ճառանիշին տակ Կ. Եսայրուեան և Յ.
Իսաղուլեան ստորագրութիւնը փնտռե-
ցէք:

**ԵԹԷ ՈՏՔԻ ԿՈՇՏԵՐԷ
(ՆԱՍԸՐ) ԿԸ ՆԵՂՈՒԻՔ**

Դիմեցէք առանց երկմտելու, Գուժ-
Գափու Ջարիֆեան ղեկարարը, ուր պի-
տի ստանաք 5 դահեկանի փոխարէն,
փոքրիկ սրուակի մը մէջ, Ս. Ջարիֆ-
եան էֆ.ի հնարած «Հակակոչտային»
հեղուկը՝ բացաարութիւնով մէկտեղ:

Գաւառներէ ուղղներու կը ղրկուի
թղթատարով:

ՀԱՅ ՇԱՔԱՐԱՎԱՃԱՌԸ

Եթէ կ'ուզէք պատուական, համով
հոտով և աժան «լոգուժէքերի» ուտել,
դիմեցէք առ Սարգիս էֆ. Ալէմեան,
Էսկի-Չապթիյէ, թիւ 57, ճիշդ Թուր-
քիա Օթէլի անկիւնը:

ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ԹԵՐԹԵՐ

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՄԱՄՈՒԼ-ՉՅՐԴՏԱՐԻ, ԿԻՍԱՄԱԹԵՐԹ.
ազգային, Գրական և Քաղաքական. Խմբագիր-Տնօրէն-
Մ. Մամուրեան, - Տարեկան կանխիկ 80 դրշ կամ 17
ֆրանք, Ուսուցիչներու համար 60 դրշ կամ 13 ֆր-
շացէ՝ Մ. Մամուրեան, Իզմիր:

ԲԱԶՄԱՎԵՊ—ՃՐԴ տարի, ամսաթիւրթ, Հայ մատե-
նագրական, սոսեգարանական, պատմական, քերական-
նական, աշխարհագրական, հնախօսական, ևլն - Տա-
րեկան կանխիկ, 10 ֆրանք:

Հասցէ՝ Rédaction de la Revue "Bazmavep",
St. Lazare Venise (Italie)

ՀԱՆԿԷՍ ԱՄՍՈՐԵԱՅ — 13րդ տարի. ամսաթիւրթ.
Հայ-գրական յօդուածներէն զատ ճշտիւ տեղեկութիւն
կուտայ Հայ. գրականութեան, Պատմութեան եւլն. Ի-
նկատմամբ, ամէն ամիս նոր հրատարակութեանց վը-
րայ ելն եւլն: Տարեկան կանխիկ 10 ֆրանք:

à la Rédaction de la Revue "Hantess",
VII⁰² Mechitharistengasse 4.
Vienne (Autriche)

ՄԵՐ ՀԱՍՑԷՆ

Ի զիմաց ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ կ'ստորագրէ մի-
միայն Տնօրէն-Խմբագրապետ Ղ. ԲՈՂԱՏ,
որու պիտի տրուի 19-րդ համարէն սկսած
թիւերէն վերաբերեալ ամէն գործառնու-
թեանց համար:

در علی‌احده بفتحه قوسه است
۱۹ نومرولی دکانده «بازم‌آه»
سر محرری (بولاد) افتدی

Ղ. Բոլատ Տնօրէն-Խմբագրապետ

«ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ»

19. Էսկի-Չապթիյէ, Պաղչէ-Գափու
Սթամպոլ

H. Polad Rédacteur en chef du journal
"HANRAKIDAK",

19. Rue Eski-Zabtié Bahdjé-Kapou. 19
Stamboul